## ԵՐԿՈՒ ԿՌԻՒ

*Ամպը եկաւ, սեւ ու մութով*
*Երկինք, գետին խաւարեց.*
*Հազար ցաւով, անհուն վշտով*
*Սիրտս, հոգիս պաշարուեց.*
*Եւ ամպի մէջ անվախ սարեր*
*Կանգնել են յաղթ՝ մինչ երկին.*
*Եւ իմ սիրտն էլ սէգ, անվեհեր*
*Դէմ է կանգնել վշտերին.*
*Ու կատաղի շանթ ու կայծակ*
*Վախ չեն ազդում լեռներին.*
*Եւ իմ սրտի ցաւ ու կրակ*
*Չեն նուաճում իմ հոգին...*

**Յարութիւն Պետրոսեան.**

1908 Թ. 29 *Մարտի,*